ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» հունվարի 2022 թվականի N 09-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Լևոն Պողոսի Սարգսյանի խնդրանքը, որոշում եմ.

1.Լևոն Պողոսի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր 2-րդ այգեզանգված թիվ 43 հասցեի 07-042-0136-0017 կադաստրային համարի 500,0 քառ.մետր և մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր 2-րդ զանգված 37-րդ թաղամաս թիվ 42 հասցեի 07-042-0136-0016 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսներով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 37-րդ թաղամաս, թիվ 42-43:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լևոն Պողոսի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» հունվարի 2022 թվականի N 08-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի երկրորդ մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Նինա Տրոֆիմի Շատուխինան սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 80 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ իրականացրել է բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ, ***որոշում եմ.***

1.Նինա Տրոֆիմի Շատուխինային ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել Նինա Տրոֆիմի Շատուխինային՝ օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել Նինա Տրոֆիմի Շատուխինային:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Նինա Տրոֆիմի Շատուխինային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«3» հունվարի 2022 թվականի N 07-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել «Վրո» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Վարազդատ Միհրանյան, 2022 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 56 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վրո» ՍՊԸ-ի տնօրեն Վարազդատ Միհրանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«3» հունվարի 2022 թվականի N 06-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 12-րդ և 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել «Հին Ջրվեժ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Մարգարիտ Բունիաթյան, 2022 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 2/1 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

2.Թույլատրել «Մարտին-Զավեն» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Մարտին Գրիգորյան, 2022 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/15 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

3. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Անահիտ Գուրգենի Ավոյանին, 2022 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 2,4 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ինչպես նաև թույլատրել տեղադրելու արտաքին գովազդ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 2,4 հասցեի հողամասին հարակից տարածքում:

4.Թույլատրել «Աստաֆյան 1» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Գարեգին Ավագյան, 2022 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/10 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

5. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սերգեյ Ներսիսյանին, 2022 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/12 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

6. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արման Պետրոսյանին, 2022 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 8/3 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

7.Թույլատրել «Վարդան և Ընկերներ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Վարդան Մկրտչյան, 2021 թվականին Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 15-րդ փողոցի թիվ 21 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ, հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

8. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«3» հունվարի 2022 թվականի N 05-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Նառա Վլադիմիրի Դավթյանի (ծնված՝ 1972 թվականի նոյեմբերի 22-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի դեկտեմբերի 24-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 4 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13062018-07-0061 վկայականը, տրված 2018 թվականի հունիսի 13-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 24-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Նառա Վլադիմիրի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասում 2021 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տուն 1-ին հարկը՝ 198,83 քառ.մետր, 2-րդ հարկը՝ 196,11 քառ.մետր, թիվ 2 տնտեսական շինությունը՝ 61,8 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 31,5 քառ.մետր, թիվ 4 աստիճանը՝ 1,1 քառ.մետր, թիվ 5 աստիճանը՝ 1,7 քառ.մետր, թիվ 6 աստիճանը՝ 1,7 քառ.մետր, թիվ 7 աստիճանը՝ 1,7 քառ.մետր, թիվ 8 աստիճանը՝ 1,3 քառ.մետր, թիվ 9 աստիճանը՝ 1,2 քառ.մետր, թիվ 10 հենապատը՝ 12,5 քառ.մետր և թիվ 11 պարիսպը՝ 5,4 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Նառա Վլադիմիրի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Նառա Վլադիմիրի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տուն 1-ին հարկը՝ 198,83 քառ.մետր, 2-րդ հարկը՝ 196,11 քառ.մետր, թիվ 2 տնտեսական շինությունը՝ 61,80 քառ.մետր, թիվ 3 լողավազանը՝ 31,50 քառ.մետր, թիվ 4 աստիճանը՝ 1,1 քառ.մետր, թիվ 5 աստիճանը՝ 1,7 քառ.մետր, թիվ 6 աստիճանը՝ 1,7 քառ.մետր, թիվ 7 աստիճանը՝ 1,7 քառ.մետր, թիվ 8 աստիճանը՝ 1,3 քառ.մետր, թիվ 9 աստիճանը՝ 1,2 քառ.մետր, թիվ 10 հենապատը՝ 12,5 քառ.մետր և թիվ 11 պարիսպը՝ 5,4 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի

N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1 496 818 (մեկ միլիոն չորս հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նառա Վլադիմիրի Դավթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 3
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» հունվարի 2022 թվականի N 04-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մորթեզա Ալիի Շարիֆի (ծնված՝ 1971 թվականի դեկտեմբերի 23-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի դեկտեմբերի 20-ի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգված 19-րդ թաղամաս թիվ 121 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, ինչպես նաև օրինականացնելու թվով 4 ինքնակամ բացված դռները, 1 ինքնակամ բացվածքը, 1 ինքնակամ պատուհանը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27012021-07-0008 վկայական, տրված 2021 թվականի հունվարի 27-ին, «Ափթայմ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 14-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Ափթայմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մորթեզա Ալիի Շարիֆին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգված 19-րդ թաղամաս թիվ 121 հասցեի հողակտորում 2003-2020 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1 այգետնակը՝ 35,41 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 26,76 քառ.մետր, թիվ 3 օժանդակ շինությունը՝ 5,79 քառ.մետր, թիվ 4 լողավազանը՝ 17,78 քառ.մետր, թիվ 5 սանհանգույցը՝ 4,9 քառ.մետր, թիվ 6, 7, 8 պարիսպները՝ ընդհանուր 15,22 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա են թվով 4 ինքնակամ բացված դուռ, 1 ինքնակամ բացվածք, 1 ինքնակամ պատուհան (կառուցման տարեթվերի վերաբերյալ համայնքապետարանում տվյալները բացակայում են, որի համար հիմք են հանդիսացել քաղաքացի Մորթեզա Ալիի Շարիֆի դիմումում նշված և «Ափթայմ» ՍՊԸ-ի-ի կողմից չափագրված և հաստատված հողամասի հատակագծում նշված տարեթիվը):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մորթեզա Ալիի Շարիֆին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգված 19-րդ թաղամաս թիվ 121 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների, ինքնակամ բացված դռների, բացվածքի, պատուհանի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Մորթեզա Ալիի Շարիֆին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգված 19-րդ թաղամաս թիվ 121 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 19-րդ թաղամաս, թիվ 121:

2.Մորթեզա Ալիի Շարիֆին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգված 19-րդ թաղամաս թիվ 121 հասցեի հողամասում 2007-2020 թվականներին ինքնակամ կառուցված թիվ 1 այգետնակը՝ 35,41 քառ.մետր, թիվ 2 ծածկը՝ 26,76 քառ.մետր, թիվ 3 օժանդակ շինությունը՝ 5,79 քառ.մետր, թիվ 4 լողավազանը՝ 17,78 քառ.մետր, թիվ 5 սանհանգույցը՝ 4,9 քառ.մետր, թիվ 6, 7, 8 պարիսպները՝ ընդհանուր 15,22 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա թվով 4 ինքնակամ բացված դռները, 1 ինքնակամ բացվածքը, 1 ինքնակամ պատուհանը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 164 767 (հարյուր վաթսունչորս հազար յոթ հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մորթեզա Ալիի Շարիֆին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» հունվարի 2022 թվականի N 03-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին և ՍՊԸ-ին՝ 2022 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով՝

1)Սիրուն Գարուշի Պետրոսյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 2 հասցեում,

2)Հրաչյա Ռուբենի Թադևոսյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 46 հասցեում,

3)Փառնակ Հնձարի Մանուկյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 2 հասցեում,

4)Դավիթ Սամվելի Մանուկյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 34-րդ փողոցի թիվ 4 հասցեում,

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» հունվարի 2022 թվականի N 02-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին՝ 2022 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով՝

1)Օլեգ Յուրիի Առուշանյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 26 հասցեում,

2)Էդուարդ Սերյոժայի Երիցյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի այգեգործական 24 թաղամասի թիվ 1 հասցեում,

3)Արսանուշ Սամվելի Սուքիասյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 18 հասցեում,

4)Նատելա Վլադիմիրի Հովհաննիսյան՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 36 հասցեում:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«3» հունվարի 2022 թվականի N 01-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին և ՍՊԸ-ին՝ 2022 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքով՝

1)Կարինե Կարապետի Հակոբյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 15-րդ փողոցի թիվ 5 հասցեում,

2)Մեսրոպ Հենրիկի Սարդարյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 41-րդ փողոցի թիվ 30-32 հասցեում,

3)Արևիկ Դավթի Խումարյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 18 փողոցի թիվ 21 հասցեում,

4)«Կոմսալ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Արամ Ալիխանյան, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 20-րդ փողոցի թիվ 3 հասցեում:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ տնտեսվարող սուբյեկտներին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2022 թ. հունվարի 3
գ. Ջրվեժ